ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 16.02.2026թ. հ. 28-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Ներկայումս Մոլդովական փողոցի հ. 43 շենքի հարակից տարածքի դիտահորի խցանում առկա չէ: Չնայած այն հանգամանքին, որ նշված կոյուղատար համակարգը ընդգրկված չէ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող վարձակալական գույքի ցանկում, խցանումների առաջացման դեպքում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության աշխատակիցներն արագ արձագանքում և իրականացնում են դրանց վերացման աշխատանքներ:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը, Մոլդովական փողոցի հ.43 և հ.43/1 հասցեների համար պատվիրվել է կոյուղագծի կառուցման/վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում կիրականացվեն նաև կոյուղատար համակարգի արդիականացման շինարարական աշխատանքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ